

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N9

### ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2018 թվականի ապրիլի 23-ին կայացած Գիտական Խորհրդի նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 30-ը (ցուցակը կցվում է)

Նախքան խորհրդի նիստի բացումը Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

#### Օրակարգ

1. 2017/2018 ուստարվա ատեստավորման քննությունների կազմակերպման ընթացքը ֆակուլտետում:  
/զեկ. փոխդեկան Վ.Վարդանյան/
2. 2017/2018 ուստարվա արտադրական և ուսումնական պրակտիկաների նախապատրաստման ընթացքը ամփոփումներում:  
/զեկ. փոխդեկան Ա.Գրիգորյան/
3. 2017/2018 ուստարվա 1-ին կիսամյակի «Դասախոսն ուսանողի աչքերով» սոց.հարցման արդյունքների քննարկումը ֆակուլտետում  
/զեկ. փոխդեկան Վ.Վարդանյան/
4. Գիտական հաղորդում:
5. Ընթացիկ հարցեր

Նախքան օրակարգի հաստատումը Խորհրդի նախագահ, ֆակուլտետի դեկան Մ.Ա.Գրիգորյանը շնորհակալագիր հանձնեց ֆակուլտետի ուսանողներ Համազասպ Ավետիսյանին, Բորիս Չիլինգարյանին, Կարեն Տիգրանյանին Երմոնիա Գյոկչակյանին և Արարատ Նազարյանին միջֆակուլտետային «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» խաղի հաղթող ճանաչվելու համար: Մ.Գրիգորյանը բարձրաձայնեց, մրցանակի առաջին անգամ ֆակուլտետ գալու մասին: Մ.Գրիգորյանը նշեց նաև, որ տվյալ մրցանակը ներկայիս ուսանողների ինտելեկտուալ կարողությունների վկայությունն է:

**1. ԼՍԵՑԻՆ.** Վ.Վարդանյանի հաղորդումը ֆակուլտետում 2017/2018 ուստարվա ատեստավորման քննությունների կազմակերպման ընթացքի վերաբերյալ: Վ.Վարդանյանը մանրամասնորեն ներկայացրեց մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների ժամանակացույցներն ըստ մասնագիտությունների: Նա նշեց, որ բոլոր ամբիոններում անցկացվել են նախնական պաշտպանությունները, որոնց ընթացքը հուսադրող է:

**ԵԼՈՒՅԹ ՈՆՆԵՑԱՆ.** Մ.Գրիգորյանը, ով իր խոսքում կրկին անգամ հիշեցրեց նախորդ տարիներից վերականգնված շրջանավարտների մասին և հանձնարարեց ամբիոնի վարիչներին նման ուսանողներին տրամադրելու ավարտական առարկայական հարցաշարերը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել ի գիտություն

**2. ԼՍԵՑԻՆ.** Փոխդեկան Արսեն Գրիգորյանի հաղորդումը ամբիոններում 2017/2018 ուստարվա արտադրական և ուսումնական պրակտիկաների նախապատրաստման վերաբերյալ: Նա նշեց, որ հանվել են բոլոր հեռավոր շրջանների երթուղիները, որոնք ընդգրկում էին նաև երթուղիներ դեպի Զանգեզուր և Արցած՝ վերջիններիս ծախսատար լինելու պատճառով: Ներկայացրեց բոլոր երթուղիների ուղղություններն ըստ մասնագիտությունների: Նշեց նաև, որ կրճատված պրակտիկաները լրացվելու են Մերձերևանյան շրջանների երթուղիներով: Խոսեց միջազգային պրակտիկաներից (Գերմանիա, Սանկտ Պետերբուրգ), որոնք դեռ հաստատված կարգավիճակ չէին կրում: Արտադրական պրակտիկաները փոփոխություն չեն կրել և անցկացվելու են տարբեր արտադրական ձեռնարկություններում:

**ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ.**

**պրոֆ.Վ.Պ.Վարդանյանը** փորձեց ճշտել միջազգային պրակտիկաների ֆինանսավորման բնույթը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**պրոֆ.Թ.Գ.Վարդանյանն** արձագանքեց, որ ըստ միջբուհական պայմանագրի, ֆինանսական հարցերը լուծվում են DAAD կազմակերպության կողմից:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել ի գիտություն:

**3. ԼՄԵՑԻՆ.** Վ.Վարդանյանի հաղորդումը **Ֆակուլտետում 2017/2018 ուս.տարվա 1-ին կիսամյակի «Դասախոսն ուսանողի աչքերով» սոց.հարցման արդյունքների** վերաբերյալ: Վ.Վարդանյանը նշեց, որ իր կողմից ամբիոնի վարիչներին բաժանվել են բոլոր դասախոսների միջին միավորներն ըստ տոկոսների: Կրկին անգամ նշեց, որ սոց.հարցումն իրականացվում է առցանց: Վարդանյանը նշեց, որ ֆակուլտետի ամբիոններից նվազագույն միավորը 4.3 է: Գովելի համարեց մասնակցությունների բավականին բարձր թիվը: Ըստ սոց.հարցման տվյալների բարձրաձայնեց կուրատորական աշխատանքի արդյունավետությունը: Ուրախալի համարեց դեկանի, դեկանատի և ֆակուլտետի միջին միավորների բավականին բարձր լինելը, ինչը համարեց հետևողական աշխատանքի արդյունք: Մանրակրկիտ կերպով ներկայացրեց դասախոսների վերաբերյալ արձանագրած կարծիքները:

**ԵԼՈՒՅԹ ՈՆԵՑԱՆ.** Մ.Ա.Գրիգորյանն ասաց, որ սոց. հարցումն ահնրաժեշտություն է: Ցավով անդրադարձավ 2 ուսանողի “մասնավոր պարապելու” կետին դրական պատասխանելու փաստին: Խոսքի ավարտին Մ.Գրիգորյանը նշեց, որ հարցման անանուն լինելն ունի իր դրական և բացասական կողմերը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել ի գիտություն

**4. ԼՄԵՑԻՆ.** Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի ասպիրանտ Հրաչ Սարգսի Հայրոյանի գիտական հաղորդումը «Կավային գրունտների սահքի դիմադրության փոփոխության օրինաչափությունները, կիրառումը սողանքային լանջերի կայունության գնահատման նպատակով (ՀՀ սողանքների օրինակով)» (ԻԴ.01.01 Երկրաբանություն) թեմայի վերաբերյալ:

**ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ.**

**դոց.Մ.Ա.Գրիգորյան** – Աշխատանքում նշված է, “...ուռչող գրունտների տարածքներում պայթեցումների աշխատանքների իրականացում...”: Նշանակում է արդյո՞ք, որ պայթեցումների աշխատանքներ կարելի է իրականացնել ոչ ուռչող գրունտների տարածքներում:

**պրոֆ.Լ.Ա.Հախվերդյան** – Սեյմաչափական մեթոդներ կիրառել եք արդյո՞ք: Կա արդյո՞ք կապ ջերմային գրադիենտի և մածուցիկության միջև:

**պրոֆ.Թ.Գ.Վարդանյան** – Արդյո՞ք շատ չէ ցուցադրական նյութի տեքստային հատվածը: Արդյո՞ք նպատակահարմար է գտել ասպիրանտը եզրակացության ծավալը:

Բոլոր հարցերին Հ.Հայրոյանը տվեց հանգամանալից պարզաբանումներ:

#### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

**դոց.Ս.Ս.Սարգսյանը** նշեց որ նախորդ քննարկումներին արված դիտողություններն ուղղվել են և հաշվի են առնվել երկրաֆիզիկական մեթոդներով կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Ս.Սարգսյանն առաջարկեց երաշխավորել աշխատանքը Մասնագիտական Խորհրդում հրապարակային պաշտպանության:

**դոց.Ս.Ա.Գրիգորյանը** նույնպես նշեց, որ աշխատանքում բավականին բան է փոխվել և նույնպես առաջարկեց երաշխավորել Մասնագիտական Խորհրդում հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հրաչ Սարգսի Հայրոյանի «Կավային գրունտների սահքի դիմադրության փոփոխության օրինաչափությունները, կիրառումը սողանքային լանջերի կայունության գնահատման նպատակով (ՀՀ սողանքների օրինակով)» (ԻԴ.01.01 Երկրաբանություն) վերնագրով աշխատանքը երաշխավորելու հրապարակային պաշտպանության:

**5. ԼՍԵՑԻՆ.** Երկրաֆիզիկայի ամբիոնի ասպիրանտ Սարգիս Սոսի Մանուկյանի գիտական հաղորդումը «Ճարտարագիտա-երկրաֆիզիկական մեթոդների կիրառման առանձնահատկությունները և արդյունավետությունը լեռնա-ծալքավոր մարզերում հիդրոտեխնիկական թունելների կառուցման նպատակով (ՀՀ տարածքում նախագծվող Մեղրի ՀԷԿ-ի օրինակով)» (ԻԴ.01.08 «Երկրաֆիզիկա») թեմայի վերաբերյալ:

#### ***ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ.***

**դոց.Ա.Ս.Սարգսյան** – Արդյո՞ք մեկնարկված է թունելի շինարարությունը:

**պրոֆ. Վ.Վ.Վարդանյան** – Ի՞նչ սկզբունքով է ընտրվել թունելի ուղեգիծը: Ինչո՞ւ են կիրառվել և ՈւԷԶ և ԴԿ մեթոդները:

**պրոֆ.Ս.Հ.Հայրոյան** – Տեղանքում կան արդյո՞ք հորատանցքեր: Ինչպիսի՞ն է ուսումնասիրվող տեղամասի տեկտոնիկան՝ խզվածքների առկայությունը:

**դոց. Ժ.Ա.Աչոյան** – Ի՞նչ խորության վրա է անցնելու նախագծվող թունելը

**պրոֆ.Թ.Գ.Վարդանյան** – Արդյո՞ք թունելի անկումը 2 առաջարկվող տեղամասերում էլ նույնն է:

**դոց.Մ.Ա.Գրիգորյան** – Արդյո՞ք աշխատանքում առաջարկված է ուլտրաձայնային ուսումնասիրությունները և եթե ոչ ինչն՞ աշխատանքում չեն առաջարկվել ուլտրաձայնային ուսումնասիրություններ:

Բոլոր հարցերին Ս.Մանուկյանը տվեց հանգամանալից պատասխաններ

#### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

**պրոֆ.Վ.Պ.Վարդանյան** – Գովելի է ինքնուրույնության մասնակցության բարձր աստիճանը, ինչը շատ կարևոր է: Թեման շատ արդի և հետաքրքիր է մերօրերի համար: Նշեց, որ ասպիրանտը լավ պատկերացնում էր թեման, ինչը ակնառու էր աշխատանքը ներկայացնելու ընթացքում:

**պրոֆ. Լ.Ա.Հախվերդյան** – նշեց, որ կողմ է քվեարկելու աշխատանքը հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցում: Նշեց նաև սեյսմիկ ուսումնասիրությունների կարևորության:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Սարգիս Սոսի Մանուկյանի «Ճարտարագիտա-երկրաֆիզիկական մեթոդների կիրառման առանձնահատկությունները և արդյունավետությունը լեռնաձալքավոր մարզերում հիդրոտեխնիկական թունելների կառուցման նպատակով (ՀՀ տարածքում նախագծվող Մեղրի ՀԷԿ-ի օրինակով)» (ԻԴ.01.08 «Երկրաֆիզիկա») վերնագրով աշխատանքը երաշխավորել մասնագիտական խորհրդում հրապարակային պաշտպանության:

**6. ԼՍԵՑԻՆ.** Սոցիալ տնտեսական ամբիոնի ասպիրանտ Գորիկ Դավթի Ավետիսյանի հաղորդումը «Անտառային գեոհամակարգերի էկոհամակարգային ծառայությունների մոդելավորումը և արժեքային գնահատումը (Տավուշի մարզի օրինակով)» (Ի.Դ.04.01 «Երկրաբնապահպանություն») թեմայի վերաբերյալ: Հաղորդման ընթացքում Գ.Ավետիսյանը առանձնացրեց նախորդ նիստում արված

դիտողությունները, ներկայացրեց ատենախոսական աշխատանքի վերանայված և փոփոխությունների ենթարկված հատվածները: Նշեց որ աշխատել է նաև ներկայացման որակի վրա:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.*

**դոց.Մ.Ա.Գրիգորյանը** նշեց որ նախորդ գիտխորհրդի նիստի ժամանակ մանրամասն քննարկվել էր և արվել լուրջ դիտողություններ: Առաջարկեց երաշխավորել մասնագիտական խորհրդում հրապարակային պաշտպանության:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Գորիկ Դավթի Ավետիսյանին «Անտառային գեոհամակարգերի էկոհամակարգային ծառայությունների մոդելավորումը և արժեքային գնահատումը (Տավուշի մարզի օրինակով)» (Ի.Դ.04.01 «Երկրաբնապահպանություն») վերնագրով աշխատանքը երաշխավորել մասնագիտական խորհրդում հրապարակային պաշտպանության:

## **7. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ**

*ՀՄԵՑԻՆ.* Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչ Պ.Գ.Դավթյանի հաղորդումը Ա.Ա.Ավագյանի և Վ.Ռ.Բոյնագրյանի կողմից ներկայացված «Գեոինֆորմատիկայի, գեոդեզիայի, քարտեզագրության, աերոտիեզերական հետազոտությունների և հեռահար զոնդավորում» հիմնական տերմինների և հասկացությունների եռալեզու բացատրական բառարանի (ռուսերեն-անգլերեն-հայերեն) վերաբերյալ: Խոսքի ավարտին Պ.Դավթյանը նշեց, որ ուղղվել և վերանայվել են նախորդ քննարկման ժամանակ նշված դիտողությունները:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Երաշխավորել Ա.Ա.Ավագյանի և Վ.Ռ.Բոյնագրյանի կողմից ներկայացված «Գեոինֆորմատիկայի, գեոդեզիայի, քարտեզագրության, աերոտիեզերական հետազոտությունների և հեռահար զոնդավորում» հիմնական տերմինների և հասկացությունների եռալեզու բացատրական բառարանի (ռուսերեն-անգլերեն-հայերեն) տպագրությունը:

**Խորհրդի նախագահ**

**Մ.Ա.Գրիգորյան**

**Խորհրդի քարտուղար**

**Ե.Ս.Մանուկյան**